

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«___» _____ 2019 թվական

N___-Ն

ք. Ստեփանակերտ

ՌՈՅԱԼԹԻ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԽՏԱՆՅՈՒԹԻ ԻՐԱՑՄԱՆ
ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՍԱՀՄԱՆԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013
ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի N 122-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին»
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13.3-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ
կետի «գ» ենթակետը և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության
կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Արցախի Հանրապետությունում ռոյալթիների հաշվարկման
նպատակով, ռոյալթի վճարողների կողմից իրացվող խտանյութի իրացման
շրջանառությունը որոշելիս վճարվող մետաղների գծով գնորդի կողմից չվճարվող
առավելագույն սահմանաչափեր են՝ ներառյալ պայմանագրով վճարող մետաղների
մասով կիրառվող ցանկացած նվազեցումները, համարվում՝

1) պղնձի խտանյութի դեպքում՝

ա. 1 չոր մետրիկ տոննա խտանյութում պարունակվող պղնձի 1 տոկոսային
կետը,

բ. 1 չոր մետրիկ տոննա խտանյութում պարունակվող ոսկու փաստացի
քանակությունը, եթե այն պակաս է 1 գրամից,

գ. 1 չոր մետրիկ տոննա խտանյութում պարունակվող ոսկու քանակության 10 տոկոսը, եթե խտանյութում պարունակվող ոսկու քանակությունը պակաս չէ 1 գրամից,

դ. 1 չոր մետրիկ տոննա խտանյութում պարունակվող արծաթի փաստացի քանակությունը, եթե այն պակաս է 30 գրամից,

ե. 1 չոր մետրիկ տոննա խտանյութում պարունակվող արծաթի փաստացի քանակության 10 տոկոսը, եթե խտանյութում պարունակվող արծաթի քանակությունը պակաս չէ 30 գրամից.

2) ցինկի խտանյութի դեպքում՝

ա. 1 չոր մետրիկ տոննա խտանյութում պարունակվող ցինկի 8 տոկոսային կետը,

բ. 1 չոր մետրիկ տոննա խտանյութում պարունակվող ոսկու 10 տոկոսը, եթե խտանյութում պարունակվող ոսկու քանակությունը պակաս չէ 1 գրամից,

գ. 1 չոր մետրիկ տոննա խտանյութում պարունակվող արծաթի 10 տոկոսը, եթե խտանյութում պարունակվող արծաթի քանակությունը պակաս չէ 30 գրամից.

3) 1 չոր մետրիկ տոննայում մոլիբդենի խտանյութի դեպքում՝ խտանյութում պարունակվող մոլիբդենի 0,5 տոկոսը, եթե պայմանագրով նախատեսված են վերամշակման ծախսերի արժեքային մեծություններ.

4) ոսկու խտանյութի դեպքում՝

ա. 1 չոր մետրիկ տոննա խտանյութում պարունակվող ոսկու փաստացի քանակության 15 տոկոսը, եթե խտանյութում պարունակվող ոսկու քանակությունը պակաս չէ 1 գրամից,

բ. 1 չոր մետրիկ տոննա խտանյութում պարունակվող արծաթի փաստացի քանակության 15 տոկոսը, եթե խտանյութում պարունակվող արծաթի քանակությունը պակաս չէ 30 գրամից:

2. Հիմք ընդունելով համաշխարհային խոշորագույն արդյունահանողների և ձուլարանների միջև պայմանագրերի բանակցման արդյունքում ձևավորված՝ մետաղական խտանյութերի վերամշակման և գտման ծախսերի տարեկան ուղենիշային գների Անուալ բենչմարկ (Annual benchmark) վերաբերյալ Մետալ Բյուլետին (Metal Bulletin), Վուդ Մակենզի (Wood Mackenzie), Սի Ար Յու Մոնիթոր (CRU monitor), Էս Էնդ Փի Գլոբալ Փլատթս (S&P Global Platts) կազմակերպությունների

կողմից հրապարակվող տվյալները՝ սահմանել, որ Արցախի Հանրապետությունում ռոյալթիների հաշվարկման նպատակով ռոյալթի վճարողների կողմից իրացվող խտանյութի իրացման շրջանառությունը որոշելիս, խտանյութերի մատակարարման պայմանագրով սահմանված վերամշակման, զտման կամ այլ համանման ծախսերի (ներառյալ տրանսպորտային) առավելագույն սահմանաչափեր են՝ ներառյալ պայմանագրով վերամշակման, զտման կամ այլ համանման ծախսերի մասով կիրառվող ցանկացած նվազեցումները, համարվում՝

1) պղնձի խտանյութի դեպքում՝

ա. 1 չոր մետրիկ տոննա խտանյութի վերամշակման ծախսեր՝ 90 ԱՄՆ դոլարին համարժեք դրամը չգերազանցող չափը,

բ. վճարվող մեկ ֆունտ պղնձի զտման ծախսեր՝ 0,09 ԱՄՆ դոլարին համարժեք դրամը չգերազանցող չափը,

գ. վճարվող մեկ տրոյական ունցիա ոսկու զտման ծախսեր՝ 3 ԱՄՆ դոլարին համարժեք դրամը չգերազանցող չափը,

դ. վճարվող մեկ տրոյական ունցիա արծաթի զտման ծախսեր՝ 0,3 ԱՄՆ դոլարին համարժեք դրամը չգերազանցող չափը.

2) ցինկի խտանյութի դեպքում՝ 1 չոր մետրիկ տոննա ցինկի խտանյութի վերամշակման և զտման ծախսեր՝ 100 ԱՄՆ դոլարին համարժեք դրամը չգերազանցող չափը.

3) մոլիբդենի խտանյութի դեպքում՝ 1 չոր մետրիկ տոննա մոլիբդենի վերամշակման և զտման համար պայմանագրով նախատեսված ծախսի չափը, սակայն վերամշակման, զտման և գնորդի կողմից չվճարվող մետաղի համար նախատեսված ծախսերի արժեքների հանրագումարը չպետք է գերազանցի խտանյութում պարունակվող մոլիբդենի արժեքի 15 տոկոսը.

4) ոսկու խտանյութի դեպքում՝

ա. 1 չոր մետրիկ տոննա խտանյութի վերամշակման ծախսեր՝ 185 ԱՄՆ դոլարին համարժեք դրամը չգերազանցող չափը, իսկ մեկ տրոյական ունցիայի զտման համար 6 ԱՄՆ դոլարին համարժեք դրամը չգերազանցող չափը,

բ. վճարվող մեկ տրոյական ունցիա արծաթի զտման ծախսեր՝ 0,4 ԱՄՆ դոլարին համարժեք դրամը չգերազանցող չափը:

3. Սահմանել, որ Արցախի Հանրապետությունում ոռոյալթիների հաշվարկման նպատակով ոռոյալթի վճարողների կողմից խտանյութերի տեղափոխման համար կատարվող ծախսերի՝ ներառյալ տրանսպորտային, փաթեթավորման, մակնշման և բեռնման, բեռնաթափման ծախսերը, առավելագույն սահմանաչափեր են համարվում՝

1) 1 չոր մետրիկ տոննայի վերահաշվարկված խտանյութի հաշվով 40 000 ՀՀ դրամը չգերազանցող չափը՝ Հայաստանի Հանրապետությունից արտահանվող խտանյութի դեպքում.

2) 1 չոր մետրիկ տոննայի վերահաշվարկված խտանյութի հաշվով 12 000 ՀՀ դրամը չգերազանցող չափը՝ Արցախի Հանրապետության կամ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտին խտանյութի վաճառքի դեպքում, եթե վերջինս Հայաստանի Հանրապետությունից արտահանում է խտանյութի վերամշակման արդյունքում ստացված ծուլվածք կամ ցանկացած արտադրանք.

3) 1 չոր մետրիկ տոննայի վերահաշվարկված խտանյութի հաշվով 40 000 ՀՀ դրամը չգերազանցող չափը՝ Արցախի Հանրապետության կամ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտին խտանյութի վաճառքի դեպքում, եթե վերջինս Հայաստանի Հանրապետությունից արտահանում է ձեռքբերված խտանյութը՝ առանց վերամշակման:

4. Սահմանել, որ սույն որոշման 3-րդ կետում նշված տրանսպորտային ծախսերին համարժեք գումարը կարող է առանձնացված չլինել սույն որոշման 2-րդ կետով նշված ծախսերից: Այդ դեպքերում 1 չոր մետրիկ տոննա խտանյութի համար որպես վերամշակման և տրանսպորտային ծախսերի նվազեցվող միասնական առավելագույն սահմանաչափ է համարվում սույն որոշման 2-րդ և 3-րդ կետերով սահմանված սահմանաչափերի հանրագումարը:

5. Սահմանել, որ ոռոյալթի հաշվարկման իմաստով հաշվետու ժամանակաշրջանում մատակարարված խտանյութի իրացման շրջանառությունը որոշելիս սույն որոշման 1-4-րդ կետերով սահմանված առավելագույն սահմանաչափերը գերազանցելու դեպքում նվազեցումները հաշվարկվում են սույն որոշմամբ սահմանված առավելագույն սահմանաչափին համարժեք, իսկ առավելագույն սահմանաչափերը չգերազանցելու դեպքում հաշվի են առնվում պայմանագրով նախատեսված չափին համարժեք:

6. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի մարտի 12-ի «Ռոյալթիների հաշվարկման համար իրացումից հասույթի հաշվարկման կարգը սահմանելու մասին» N 122-Ն որոշումը:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ